«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

18 հունիսի 2019 թվականի

Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափերը սահմանելու մասին

Լսելով և քննարկելով **«Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափերը սահմանելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2019-2020 ուսումնական տարվանից առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առաջին կուրսի ընդունելության խմբերի համար սահմանել հետևյալ նվազագույն չափերը՝
   1) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 25 ուսանող,
   2) առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 10 ուսանող:

2. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի «Բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափի սահմանման մասին» որոշումը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Դ.Ռ.Գալոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. հունիսի 18
Երևան